# «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 22-ի N 703-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**_____ _____________ 2019 թվականի N ________ Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 22-Ի**

**N 703-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 22-ի «**Ձկնային տնտեսության կարիքների համար ջրային ռեսուրսների օգտագործման կարգը հաստատելու մասին**» N 703-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները`

- Որոշումը լրացնել նոր 1.1.-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 6.1.-րդ կետով նախատեսված չափորոշիչների նկատմամբ մոնիտորինգը իրականացնում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ոլորտի լիազոր պետական մարմինը»:

- որոշմամբ հաստատված հավելվածի 6-րդ կետից հետո լրացնել նոր

6.1.-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«6.1.Արարատյան դաշտում ձկնաբուծական տնտեսությունների համար սահմանվում են ջրօգտագործման և ձկնարտադրության հետևյալ չափորոշիչները՝

- ա.1 լ/վ ջրաելքով իշխան ձկնատեսակի համար՝ 700 կգ,

բ. 1 լ/վ ջրաելքով թառափ ձկնատեսակի համար՝ 800 կգ,

- գործող ձկնաբուծական տնտեսությունների համար՝ հետևյալ չափորոշիչները՝

ա. **I փուլ**՝ 2020-2021 թվականներին՝ 1 լ/վ ջրաելքով իշխան ձկնատեսակի համար՝
600 կգ, թառափ ձկնատեսակի համար՝ 700 կգ,

բ. **II փուլ՝** 2022 թվականին՝ 1 լ/վ ջրաելքով իշխան ձկնատեսակի համար՝
650 կգ, իսկ թառափ ձկնատեսակի համար՝ 750 կգ,

գ**. III փուլ՝** 2023 թվականին՝ 1 լ/վ ջրաելքով իշխան ձկնատեսակի համար՝ 700 կգ, իսկ թառափ ձկնատեսակի համար՝ 800 կգ,»

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՎԱՐՉԱՊԵՏ՝**
**Ն. ՓԱՇԻՆՅԱՆ**